Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
ապրիլի 14 -ի N 215 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«Խոհարարական դասասենյակների վերազինում»

1.	Ծրագրի նպատակը	«Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, «Արմավիրի ինդուստրիալ-մանկավարժական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում և «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան Կրթական Հիմնադրամ»-ի կողմից տարիներ առաջ ներդրված խոհարարական դասասենյակները վերազինել ժամանակակից պրոֆեսիոնալ խոհարարական սարքավորումներով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Անուշավան և Օֆիկ Աբրահամյան Կրթական Հիմնադրամ», հասցեն՝ ք. Նորթրիջ, 9003 Ռեսեդայի պողոտա, #205A, 91324, Կալիֆորնիա նահանգ, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	«Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ», Հայաստանի մասնաճյուղ, հասցեն՝ ք. Երևան, Ամիրյան 8/26, ՀՎՀՀ՝ 01238936
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, փ. Սպանդարյան 3 ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, փ. Աբովյան 170 ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, փ. Գործարանային 3 Բնագավառը՝ կրթություն (արհեստագործական)
6.	Ծրագրի բյուջեն	6,765,645 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	«Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ, ՀՎՀՀ՝ 01563256, «Արմավիրի ինդուստրիալ-մանկավարժական պետական քոլեջ» ՊՈԱԿ, ՀՎՀՀ՝ 52632541, «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ, ՀՎՀՀ՝ 74859621:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	*23.04.2020 – 30.05.2020*
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Անուշավան և Օֆիկ Աբրահամյան Կրթական Հիմնադրամ»-ի կողմից բարեգործություն ստացող հաստատություններում տարիներ առաջ հիմնվել են խոհարարական դասասենյակներ, որոնք այժմ գտնվում են անմխիթար վիճակում: Ուստի, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է դրանք վերազինել ժամանակակից պրոֆեսիոնալ խոհարարական սարքավորումներով: Նախատեսվում է՝ 23.04.2020 – 30.05.2020 ժամանակահատվածում «ՔԱՄ ԵՆ ԳՈ» ՍՊԸ-ի միջոցով ձեռք բերել և մոնտաժել համապատասխան խոհարարական սարքավորումներ: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 6,765,645 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է՝ «ՔԱՄ ԵՆ ԳՈ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրով ձեռք բերել ժամանակակից պրոֆեսիոնալ խոհարարական սարքավորումներ և դրանք մոնտաժել շահառու հաստատությունների համապատասխան դասասենյակներում: Ամբողջ սարքավորումների համար նախատեսված գինը կազմում է 6,765,645 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցային աշխատանքներ նախատեսվում են՝ «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ»-ի Հայաստանի մասնաճյուղի, «Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, «Արմավիրի ինդուստրիալ-մանկավարժական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի միջև:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի ավարտից հետո «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ»-ի Հայաստանի մասնաճյուղը վերջնական հաշվետվություն կներկայացնի ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ